ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2017 թվականի փետրվարի 23-ի նիստի N 4 - Լ

Լսելով Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Ռազմավարական ծրագրի գործողությունների պլանի ընթացքի իրականացման մասին հաղորդումը /զեկուցող՝ Մ. Ավագյան/.

Գիտական խորհուրդը որոշում է՝

1. ՀՊՄՀ 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրի 2016թ. նախատեսված գործողությունների կատարողականի ընթացքը համարել բավարար:
2. Հաստատել ՀՊՄՀ ռազմավարական պլանավորման իրականացման և մշտադիտարկման վերամշակված կարգը և ճանապարհային քարտեզագրումը:
3. Հաստատել ՀՊՄՀ ֆակուլտետների, ամբիոնների, վարչությունների և բաժինների հաշվետվողականության /ինքնավերլուծություն և ինքնագնահատում/ ձևաչափերը:

4. Համալսարանի ստորաբաժանումներին և ենթակառուցվածքներին.

- Մինչև 2017թ. մարտի 5-ը իրականացնել քննարկումներ և վերլուծություն ռազմավարության 2016 թվականի գործողությունների պլանի կատարման վերաբերյալ, կատարել համապատասխան փոփոխություններ 2017թ. գործողությունների պլանում դրանց ամբողջական կատարման համար:
- Մինչև 2017թ. մարտի 15-ը ֆակուլտետների խորհրդներում, ամբիոնների նիստերում, վարչություններում և բաժիններում քննարկել և հաստատել 2017 թվականի տարեկան գործողությունների պլանը ելնելով ՀՊՄՀ-ի ռազմավարական ծրագրի , ֆակուլետեների, ամբիոնների գործողությունների պլանների դրույթներից, ներկայացնել այն ՀՊՄՀ կրթության բարեփոխումների և որակի վարչություն:
- Յուրաքանչյուր տարի հունիս և դեկտեմբեր ամիսներին անդրադառնալ խորհրդում և ամբիոնի նիստերում ՀՊՄՀ ռազմավարական ծրագրից բխող նախանշված տարեկան գործողությունների ընթացքին, տարեվերջին հատկացնելով մանրամասն հավետվություն ՀՊՄՀ ԿԲ և Ո վարչությանը կատարված աշխատանքի մասին:

5. Հաստատել ՀՊՄՀ 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրից բխող՝ 2017թ. գործողությունների պլանը:
6. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտխորհրդի նախագահ՝ **Ռուբեն Միրզախանյան**